

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Ս. ԱԹՈՒՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ
1882-83 Ա.Մ.Ա.Ց

Ե Ի

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ
ՄԱՏՈՒՅԵԱԼ

Ա Ռ

Ա.ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ



Կ. ՊՕԼԻՍ

=

1883

13641

ՅԱԻԵԼՈՒԱԾ ԺԱ. ՆՍՏԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

(7 Հոկտեմբեր 1883)

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Ե Ի

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ ՏԶ.ՏՅ ԱՄԱՑ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ

ՄԱՏՈՒՑԵԱԼ

Ա. Ռ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Մեծապատիւ Ատենապետ Էփէնտի
Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ,

Երուսաղէմի Ամեն. Սրբազան Պատ-
րիարքն նամակաւ մը յղած լինելով Ս.
Աթուռոյն 1882-1883 տարւոյ հաշուե-
ցոյցն և ընդ նմին 83-84 տարւոյ եւր-
տացոյցն , Ազգային Վարչութեան Քաղա-
քական Ժողովն Երուսաղէմի Կանոնադ-
րին ԿԿրդ. յօդուածոյն արամադրու-
թեան համաձայն՝ կը հաղորդէ զայն՝
Պատկառելի Ժողովոյդ , Միաբանական
ընդհանուր Ժողովոյ տեղեկագրին և ու-
րիշ յատակից թղթոց հետ ,

Մնամք յարգանքս

Ի դիմաց Ազգ. Վարչութեան Քաղա-
քական Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Բ. Հայանեան Ս. Մազուտեան

Կ. Պօլիս 22 Սեպտ. 1882

Բարձրաշնորհ Սրբազան Եղբայր Ի
Քրիստոս .

Սուրբ Աթուռոյս 1882-83 տարւոյ
հաշուեցոյցն ու 83-84 տարւոյ ենթադ-
րեալ երմտացոյցը Միաբանական Ընդհա-
նուր Ժողովոյ կողմանէ վաւերացուելով
հանդերձ տեղեկագրով յանուն Ձեր Բ.
Սրբազնութեան ղրկուած ըլլալով . զայն
Ձեր Սրբազան Եղբայրութեան կը ներ-
կայեմք :

Յատկապէս Ձեր Ամենապատիւ Սըր-
բազնութեան խորին ուշադրութիւնը կը
հրաւիրեմք թէ՛ նոյն տեղեկագրի և թէ՛
մասնաւորապէս նոյն Միաբանական Ընդ-
հանուր Ժողովոյ կողմանէ մեզ ուղղուած
նամակի՝ որոյ պատճէնը ներփակեալ է ,
պարունակութեան վրայ և կը խնդրեմք

որ բարեհաճիք Ձեր իմաստութեամբ դատել թէ այս վիճակին շարունակութիւնը ամեն կերպիւ քանի՜ աղետաբեր պիտի լինի:

Դարմանն այս մեծ ցաւոյն Ձեր Բ. Սրբազնութեանն սպասելով, ողջունիւ եղբայրական սիրոյ:

Մնամք Ազօթարար

Սրբոյ Աթոռոյ Երուսաղէմի

Պատրիարք Եսայի Արքեպիսկոպոս

Կ. Պօլիս

1883 Յուլիս 19

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Միաբանական Ս. Աւիւտին 'ի Կ. Պօլիս

Միաբանական Ընդհանուր Ժողովը թէև կը յուսար որ այս տարին Ձեր Բարձր Սրբազնութեան ներկայութեամբ և Նախագահութեամբ ներկայ շրջանի բացումը ընելու բարեբախտութիւնը պիտի ունենար, սակայն դժբաղդաբար այս անգամ ևս պարտաւորեցաւ Ձեր Բարձր Սրբազնութեան բացակայութեամբ ընել տոյն շրջանի բացումը. ուստի Տնօ. Խորհրդոյ տարեկան համարատուութիւնը ստանալով՝ վաւերացնելէն յետոյ ներփակեալ կը զրկէ իւր տարեկան համարատուութիւնը, առ Ազգ. Երեսփոխանական Ժողովն ներկայացնելու համար:

Միաբանական Ընդհ. Ժողովոյ համարատուութեան գրեթէ են 1. Տեղեկագիր, 2. Հաշուեցոյց 1882-83 տարւոյ և 3. Ելեմտացոյց 1883-84 տարւոյ:

Միաբանական Ընդհ. Ժողովը Տնօ. Խորհրդոյ պաշտօնավարութեան շրջանի լրման և հրաժարման առթիւ նկատողու-

թեան առնելով Ձեր Բարձր Սրբազնութեան 1883 Ապրիլ 7 և համար 55/1 նախագին, համաձայնութեամբ որոշեց որ Տնօ. Խորհուրդը առժամայ կերպիւ շարունակէ իւր պաշտօնը ցվերադարձ Ձեր Սրբազնութեան. այն յուսով և ակնկալութեամբ, որ Ձեր Սրբազնութիւնը 'ի մօտոյ յաջողութեամբ պիտի կրնայ վերադառնալ:

Ինչպէս անցեալ տարւոյ տեղեկագրով Ձեր Սրբազնութեան ուշադրութիւնը հրաւիրած էինք Ձեր Սրբազնութեան երկարելուն և անյաջողութեան հետևանաց մասին, այս անգամ ևս Միաբանական Ընդհ. Ժողովը ստիպողագոյն պատճառներով հարկ կը տեսնէ վերստին Ձեր Սրբազնութեան ուշադրութիւնը հրաւիրել իրաց ներկայ վիճակին վրայ և խնդրել որ Ազգ. Կեդր. Վարչութեան քով Ձեր ազգու ջանքերն 'ի գործ դրնելով ժամ առաջ յաջողութեամբ Ձեր վերադարձը փութացնել հաճիք. քանզի Ձեր Սրբազնութեան երկար ժամանակեայ բացակայութիւնը և անյաջողութիւնը պարտաւորեց կասկածները հրաւիրել սկսած է. որով մէկ կողմէն իրենց դրամները ուղղնելուն դրամը հատուցանելու ժամանակ՝ միւս կողմէն նոր փոխառու մը չ'զտնուիր. և այս վիճակը օր մը 'ի հարկէ կրնայ աղետալի հետևանք մ'ունենալ. իսկ Ծրիւթիկիւրի և Ընկերաց դրամանոցին քովը մեր ունեցած վարկը մեր օրական պիտոյից չափովը լինելով, կարելի չ'է չարաչար դորձածել դայն. բաց յայտմանէ Լուսարարապետի անակրնկալ մահուան պատճառաւ յաջորդէ մը՝ ինչպէս նաև Տնօր. Խորհրդոյ ընտրութեան ստիպողականութիւնը յայտնի

է. ինչպէս յայտնի է նաև իրաց այս վիճակին ուխտաւորաց յաջողութեան համար ունեցած տպաւորութիւնը. զի այս տարւոյն ուխտաւորք թէ՛ Ձեր Սրբազնութեան բացակայութեան՝ եւ թէ՛ Լուսարարապետի մահուան պատճառաւ անմխիթար մեկնեցան եկեղեցական հանդիսից նկատմամբ, որ անշուշտ լաւ ազդեցութիւն չ'պիտի ընէ առաջիկայ տարւոյն մտադրողաց վերայ՝ եթէ Պատրիարքական Աթոռն եւ Լուսարարապետի պաշտօնը թափուր մնան առկալին:

Միաբանական Ընդհ. Ժողովը այս ամենը յիշեցնելով Ձեր Բարձր Սրբազնութեան և Ձեր յաջողութեամբ վաղընդփոյթ վերադարձին սպասելով կը շարունակէ իւր մաղթանքները վասն առողջութեան պատուական անձին Սրբազնութեանդ:

'ի դիմաց Միաբանական Ընդհ. Ժողովոյ 'ի բացակայութեան Ամեն. Սրբազնութեանդ.

Նախագահ և

Ատենապետ Պատրիարքական Փոխ. Երեսփա Եպիսկ. Յարութիւն Եպիսկ.

29 յունիս 1883

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Երեսփոխանական Պատկառելի Ժողովոյ:

Ս. Աթոռոյ Միաբանական Ընդհ. Ժողովը Վարչական նոր տարւոյս առթիւ 'ի բացակայութեան իւր Ամեն. Ս. Նախագահին, Տ. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր, Ս. Աթոռոյ Տնօրէն Խորհրդոյ անցեալ 1882-83 տարւոյ համարատուութեան Տեղեկագիրը, տարեկան ելե-

մրտից Հաշուեցոյցը եւ ներկայ 1883-84 տարւոյ ելեմտացոյցը ըստ օրինի ընդունելով՝ ստուգելէն և վաւերացնելէն յետոյ կը փութայ ներկայիս իւր պարտաւորութիւնը կատարել առ Ազգային Երեսփ. Պատկառելի Ժողովը, ընդ ամեն մատուցանելով 1882-83 տարւոյ ելեմտից Հաշուեցոյցը և 1883-84 տարւոյ ենթադրեալ ելեմտացոյցը:

Տարեկան Տեղեկագրիս պատկանած թուականը՝ Տնօրէն Խորհրդոյ երկամեայ շրջանին երկրորդ տարին լինելով, Տնօ. Խորհրդոյ անդամաց մէջ որ և է փոփոխութիւն չ'է եղած. ուստի անցեալ տարւոյ Տնօ. Խորհուրդն շարունակած է իւր պաշտօնը՝ բացակայութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և իւր մի անդամին, որ Ս. Պատրիարք Հօր հետ կը դանուի:

Սոյն տարեկանի մէջ թէև մի կողմէն քանի մը քրճաղդեաց միաբան աւելցած է Միաբանութեան անցեալ տարւոյ թուոյն վրայ, սակայն միւս կողմանէ վախճանած են մէկ Եպիսկոպոս, որ է Լուսարարապետ Խաչակ Եպիսկոպոսն, մէկ սարկաւադ, երկու միաբան և մէկ մայրապետ. մէկ սարկաւադ ևս մեկնած է:

Ժառանգաւորաց վարժարանն անցեալ տարւոյ պէս շարունակուած է երեք դասարանով և 30 ի չափ աշակերտներով, որք կը պարապին կանոնադրով ծրագրեալ ուսմանց, նոյնպէս ըստ առաջնոյն կը շարունակուին Քաղաքի երկսեռ դպրոցները և Բեթլեհէմի դպրոցը, որք Ս. Աթոռոյ կողմէն կը հոգացուին, և Յուպպէի երկսեռ դպրոցները, մասնակցութեամբ տեղացի ազգայնոց: Բաց յայսցանէ մի քանի գիւղերու և եկե-

ղեցեաց մասնաւոր նպաստներ եղած են
դրքեր նուիրելով :

Միաբանական յարաբերութիւնը ըստ
առաջնոյն խաղաղասիրական ոգւով շա-
րունակուած են առանց տեղի տալու Ս.
Տեղեաց մէջ Ս. զգային իրաւանց կորստ-
եան . սակայն Ս. Ծննդեան մասին բա-
ղում տարիններէ ՚ի վեր ընդ Յոյն եղած
իրաւանց վէճի խնդիրը առ կախ մնացած
է : Տարւոյս մէջ իբր Ս. Տեղեաց խնդիր՝
միջադէպ մը տեղի ունեցած է ՚ի Ս. Համ-
բարձում , սւր Ս. Համբարձման ուխտա-
տեղւոյն ներքին և արտաքին գոռները
երուսաղէմացի արարացի էֆէնտի մը իբր
Գ-Ե-Ե-Ե-Ե-Ե-Ե իրաւունքով և առանց իրա-
ւատէր ազգած գիտութեան նորոգած
լինելով մեր և Յունաց կողմէն եղած ան-
միջական բողոքանաց վրայ տեղական կա-
ռավարութիւնն վերջնեւ տալով ուրիշ
գոռներ դրած են կառավարութեան կող-
մէն և խնդիրն փակուած :

Իսկ տարեկան Ելեմտից վիճակը
ինչպէս ներփակեալ Հաշուեցոյցէն կը
տեսնուի :

1882-83 տարւոյ ընդհ.
ծախքը եղած է 912,074 շշ.

1882-83 տարւոյ ընդհ.
արդիւնքը եղած է 707,188 շշ. 14 փր.

Որով տարեկան Ելեմտ-
տից բացն եղած է 204,885 շշ. 26 փր.

Մինչդեռ տարւոյն
օկիդըր ենթադրեալ
էր ընդհ. ծախք 1,000,000 շշ.

Ընդհ. արդիւնք 815,000 »

Ելեմտից բաց 185,000 »

Հետեւաբար տարե-
կան Ելեմտքը են-
թադրեալ Ելեմտ-
քէն աւելի բաց մը
կը թողու 19,885 շշ.

Ինչպէս կը տեսնուի , տարեկան
ընդհ. ծախսուց գումարը գոհացուցիչ է ,
վասն զի ենթադրեալէն 87,926 շշ. նը-
ւաղ եղած է , որ պարէնից և այլ պի-
տոյից դիւնելու չափաւորութենէն և ձեռք
առնուած խնայողական զգուշութիւննե-
րէն յառաջ եկած է , իսկ ընդհ. արդ-
եանց կամ հասութից գումարը անբա-
ւական եղած է , վասն զի ենթադրեա-
լէն 107,811 շշ. 26 փր. նուաղ եղած
է , որ գլխաւորաբար բարեպաշտական
արդեանց նուազութենէն յառաջ եկած
է :

Տարեկան Ելեմտից վերոյիշեալ կեր-
պիւ յառաջ եկած անհաւասարակշու-
թեան պատճառաւ Ս. Աթոռոյ Ելեմտից
բացն որ 1882 Ս. պրիլ

30 ին էր միայն 3,502,052 շշ. 3 փր.
1882-83 տարւոյ
Ելեմտից բացն ևս
վրայ գալով 204,885 շշ. 26 փր.

1883 Ս. պրիլ 30 ին
եղած է 3,706,937 շշ. 29 փր.

Յառաջիկայ 1883-84 տարւոյ հա-
մար քուէարկեալ Ելեմտացոյցը , որ նա-
խորդին վրայ միայն մասնաւոր փոփոխու-
թեամբ չի նուած է , և որոյ բովանդա-
կութիւնը Տեղեկագրիս հետ մատուցեալ
է՝ կը ներկայացնէ .

1883-84 տարւոյ համար ենթադրեալ
ծախք 100,000 շշ.

1883-85 տարւոյ համար
ենթադրեալ արդիւնք 800,000 շշ.

Որով ենթադրեալ տարե-
կան Ելեմտից բացն կը լինի 200,000 շշ.

Ս. Աթոռոյ Ելեմտից այս անհաւա-
րակշուութիւնը դարձանէն անհնարին

եղած է , և պիտի լինի ցորչափ տոկո-
սաւոր պարտքն անվճառ մնայ , որոյ հա-
մար վճարեալ տարեկան տոկոսներն
ընդհ. ծախուց դրեթէ մէկ երրորդ մա-
սը կը կազմեն և Ելեմտից մէջ անհաւա-
սարակշուութիւն յառաջ կը բերեն , բաց
յայտմանէ դիտելի է , որ մինչդեռ մէկ
կողմանէ ծախքերը անհրաժեշտ են , միւս
կողմանէ ընդհակառակն արդեանց մե-
ծագոյն մասն , այն է՝ բարեպաշտակա-
նը բողոքովին անհաստատ լինելով Ելեմտ-
տացոյցին մէջ ենթադրեալ գումարը մի-
այն ամենայնող պարագայից մէջ կրնայ
զոյանալ , առանց ՚ի հաշիւ առնելու պա-
տահական դիպուածները , ինչպէս են ա-
ռետրոց անյաջողութիւնք , քաղաքական
չփութութիւնք , պատերազմ , բնական
ձախորդութիւնք և զանազան պատա-
հարք , որք մեծապէս կ'ազդեն՝ մանա-
ւանդ բարեպաշտական արդեանց վրայ :

Գալով տոկոսաւոր պարտուց վճար-
ման խնդրոյն , որ քանի տարիներէ հե-
տէ Չեր Բ. Սրբազնութեան , Ազգ. երեսփ.
պատկառելի Ժողովոյ և պարտուց բարձ-
ման Ազգասէր Յանձնաժողովոյ ջերմ հո-
գածութեան առարկայ եղած է , հակա-
ռակ մինչև ցորդ եղած հաւաքական ջա-
նից և աշխատութեան՝ դեռ գոհացու-
ցիչ արդիւնք մը և վերջնական լուծում
մը ոտացած չ'լինելով և միւս կողմանէ
տարեկան Ելեմտից բացը աւելնալով ան-
տարաիցս պարտուց գումարը պիտի ըստ-
ուարանար . սակայն այս վիճակին իբր
մասնական դարման մինչև տարւոյ վերջը
Ամեն. Տ. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր ՚ի
Մայրաքաղաքը և երկու Արժ. Նուիրա-
կաց ՚ի Ռուսահայս ըրած հանգանակու-
թենէն 2,100 լիրայ ստացած լինելով Մի-

աբանութիւնս , անմիջապէս ՚ի հաշիւ
պարտուց՝ Գաղաքիս դրամանոցին վճար-
ուած է , որով այս տարի տոկոսաւոր
պարտուց գումարը փոխանակ աւելնալու
փոքր ինչ նուազած է :

Արդ՝ Միաբ. Ընդհ. Ժողովը իւր տա-
րեկան համարատուութիւնը ներկայացը-
նելու առթիւ՝ պարտաւորութիւն կ'ըզայ
Ս. Աթոռոյ պարտուց վճարման համար
ազգովին եղած ձեռնարկութեանց և աշ-
խատութեանց մասին իւր երախտագի-
տութիւնն յայտնելով հանդերձ՝ վերստին
Չեր Բ. Սրբազնութեան և Ազգ. երեսփ.
Ժողովոյ կարեկից ուշադրութիւնն հրա-
ւիրել Միաբանութեան այս տագնապալից
վիճակին վրայ , որոյ դժուարութիւնք
աւելցած են Ամեն. Ս. Պատրիարք Հօր
երկար ժամանակեայ բացակայութեամբ
և Լուսարարապետի անակնկալ մահուամբ
որոյ , ինչպէս նաև Տնօ. Խորհրդոյ նոր
ընտրութեան համար Ն. Ամեն. Սրբազ-
նութեան ներկայութեան կարեւորութիւ-
նը նկատողութեան առնելով բանաւոր
դատուեցաւ Ամեն Ս. Պատրիարք Հօր
ողջամբ գալստեան սպասել , յանձնա-
րարելով հրաժարեալ Տնօ. Խորհրդոյն շա-
րունակել իւր պաշտօնն ց'այն վայր առ-
ժամեայ կերպիւ :

Ուստի սոյն դառնաղէտ կացութեան
վախճան տալու փափաքանօք , Միաբա-
նութիւնս անհամբեր կ'սպասէ Ս. Պատ-
րիարք Հօր յաջողութեամբ վերադարձին
և պարտուց վաղ ընդ փոյթ և անմիջական
վճարման՝ ՚ի շինութիւն և յ'ազատու-
թիւն Ազգ. Ս. Տանս և ՚ի պատիւ սիրե-
լի Ազգիս :

Ի դիմաց Միաբ. Ընդհ. Ժողովոյ
Ս. Աթոռոյն երուսաղէմի
Ի բացակայութեան Ամեն Ս.
Պատրիարք Հօր

Ատենապետ Նախագահ և Պատր. ֆոխ.
Երեմիա Եպիսկ. Յարութիւն Եպիսկ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Մեծաշուք Առնապետ էֆէնտի
Աղգային ժողովը .

Համարակալութեան Դիւանս ստանալով Ս. Երուսաղէմի Սրբոյ Յակօբեանց Աթոռոյ Պատուարժան Միաբանութեան տարեկան համա-րատում թեան տեղեկագիրը , և ընդ նմին նոյն Ս. Վանուց անցեալ 82—83 տարւոյն հաշուեցոյցը և 83—84 տարւոյն Ելմտացոյցը , վաւթաց վանոնք նկատողութեան առնուլ , և իւր քննութեան արդիւնքը ներկայիս տեղեկագրել առ Աղգային ժողովը :

Ս. Երուսաղէմի Կանոնադրին 44րդ յօդուածին համաձայն , Սրբոյ Յակօբեանց Միաբանարան Ուխտը այս երկրորդ անգամ կը ներկայէ իւր Համարատում թեան տեղեկագիրը : Ա. անգամ մատուցած է անցեալ 1882 ամի Հոկտ. 7 ի նստին , հանդերձ հաշուեցոյցով և ելմտացոյցով , զորս ժողովն յէր է առ Համարակալութեան Դիւան ի նախաքննութիւն . բայց Առնապետութիւնը չեն ցուցներ թէ այդ քննութիւն կատարուած և ժողովին ներկայած լինի :

Հետեւաբար Համարակալութեան Դիւանս այժմ հարկ տեսու առաջին տեղեկագիրն և յարակից թղթերն ալ ներկայ Բ. տեղեկագրին և յարակից թղթոց հետ նկատողութեան առնուլ :

Միաբանական կազմութեան մասին — Ա. տեղեկագրին մէջ նշանակեալ է թիւ Միաբանից

Եպիսկոպոս	5
Վարդապետ	38
Սարկաւագ	3
Ուրարակիր	10
Ժառանգաւոր	27
Միաբան	60
Մայրապետ	30

173

Հինգ սարկաւագներ յաստիճան վարդապետութեան կոչուեր են Նիկողոս , Պետրոս , Գրիգորիս , Մաշուքէ և Տրդատ վարդապետը , և երկու վարդապետը Մկրտիչ Երզնկայի և Վահան Յակօբեան «Միաբանական անդամաց ցանկէն ջնջուեր են , իրենց հանրածանօթ ապօրինի արարմանց և անտեղի չարախօսութեանց համար , որով փորձեցին ժողովուրդը դայթակղեցնել և Ս. Աթոռոյ պարտուց բարձման հանգանակութիւնն խախտել ի զիստ Ս. Աթոռոյ և Աղգին» : Այսչափ ինչ կը խօսի Ա. տեղեկագիրն սոյն երկու վարդապետաց համար , առանց բացատրելու թէ ինչ էին հանրածանօթ ապօրինի արարը նոցա : Յայտնի է սակայն թէ Տ. Վահան վարդապետ ի Պօլիս կրած դատաստանի մը համար բողոքած է արդէն առ Աղգային ժողով , որ Վարչութեան յղած է ի տեղեկագրութիւն , ի նկատ 4 նոյեմբերի 82 :

Բ. տեղեկագիրը կը ծանուցանէ թէ վախճանած են 1 Եպիսկոպոս , Տ. Իսահակ Եպիսկոպոս Լուսաբարապետ , 1 Սարկաւագ , 2 Միաբան , 1 Մայրապետ , իսկ 1 Սարկաւագ մեկնած է վանկէն . և բանի մը քրճաղղեաց միաբան աւելցած են : Ըստ այսմ նախընթաց տարւոյ 173 թիւէն զեղչելով վախճանելոց և մեկնողին 6 թիւը , կը մնայ 167 ընդհանուր թիւ Միաբանից : Փափաքելի էր որ Բ. տեղեկագիրը յաւելեալ քրճաղղեաց Միաբանից թիւն ալ բացորոշ նշանակէր , որպէս զի այս աւուր Միաբանից ընդհանուր թիւը որոշակի գիտցուէր :

Ուսումնական յառաջադիմութեան մասին — Ա. տեղեկագիրը կը ծանուցանէ թէ , 1880 թուականի Զատիկին միջոցները գտնուած աշակերտք ճամբուեր են , և ըստ 64րդ յօդուա

ծի կանոնադրին՝ հետզհետե նորեկներ ընդունուելով, երեք դասարաններ կազմուել են 25 աշակերտի համար, « որք մի կողմէն եկեղեցական դպրութեան պաշտօնը վարելով հանդերձ, կը պարապին կանոնադրով ծրագրեալ ուսմանց » : Այս վիճակը շարունակուած է և այս տարի, ինչպէս կը յայտնէ Բ. տեղեկագիրը . միայն յաւելլով թէ աշակերտաց թիւն 30ի չափ է : Ըստ առաջնոյն Ս. Աթոռոյ կողմէն կը հոգացուին Երուսաղէմի երկսեռ դպրոցները, Բեթլէհէմի դպրոցը, ևս Յոսպէի դպրոցը, բայց այս վերջինը մասնակցութեամբ տեղւոյի աղջկանց : Իսկ ընդհանրապէս Աղգ. դաստիարակութեան նկատմամբ գործադրուած միջոցներ չկան, քանզի արդի պարտական վիճակը չ'եներ . յիշենք աստ Ս. Երուսաղէմի պատուիրակի Վսեմ. Սահման փառայի սա խօսքերը զորս ըրաւ յատենի Աղգ. ժողովոյ ի նիստ 10 Հոկտեմբերի 1880 . « Իսկ Աղգ. ընդհանուր դաստիարակութեան օժանդակելու մասին, որոշեցինք ձգել Աղգին որ յարմար դատած տեղը ուսումնարան բանայ և Երուսաղէմ գանի տնտեսէ, երբ պարտքէ ազատելով իր հասոյթը ծախուց հակաիշխէ և ներէ Ս. Աթոռոյ իր այս կոչմանն ալ պատասխանել » : Տես նաև կանոնադրին 63րդ յօդուածը :

Դիւանս ի ձեռին ունենալով Ս. Երուսաղէմի երկու տարուան հաշուեցոյցերը, կը կարծէ թէ բնաւ ժամանակ մը չալտի կրնայ Աղգն յաւալ այդպիսի ուսումնարանի մը բացումը, բանի որ՝ եթէ պարտքէն իսկ ազատի Երուսաղէմի վանուց անուկը, դոյաջեալ հասոյթն հազիւ պիտի բաւէ իւր սովորական ծախուց, ինչպէս յիշ մը վերջը պիտի տեսնենք :

Յարութեալկան մասին — Թէ Ա. և Թէ Բ. տեղեկագիրը կը հաստատեն Սրբոյ Յակոբեանց Միաբանութեան արթնաթիւնը աղգասթեան մասին, սո գերազանց առաւելութեամբ որ, երկու տարի այդ խնդրոց մէջ մասնաւոր ծախուց տեղի չէ մնացեր, և ասի դոհութեան արժանի է :

Ա. տեղեկագիրն մէջ նշանակեալ է Ասորւոց վէճն . « Ասորիք ի Ս. Յարութեան Տաճարն՝ Յովսէփ Արիմաթացոյ մատուոին մէջ Հայոց Տեսչին միջոցաւ նորոգուած փոքրիկ դարակի մը գործածութեան խնդիրն առիթ բռնելով, մեր անդ գտնուած սակաւաթիւ Միաբաններն գանալով և վիրաւորած էին, սակայն Կառավարութեան ջանից չնորհիւ յարձակողաց յանցանքն ստուգուել է, և Ասորիք զղջալով, Վսեմ. Կառավարչին միջնորդութեամբ պատուաւոր հատուցում եղեր է, որով յարաբերութիւնը նախկին վիճակին վերածուել է » : Թէև տեղեկագիրը ըսու է, բայց կերեի թէ Սրբոյ Յակոբեանց Միաբանութիւնը Ասորւոց բռնած ընթացքին առջև՝ դանդաղ մեր աղգային սեփականութեանց ոմանց՝ իրենց հետեակութեամբը մասնակցելու իրաւունքէն զրկած կամ զրկել սպառնացած պիտի ըլլան, որով Վսեմ. Կառավարչին միջնորդութեամբը յարաբերութիւնը նախկին վիճակին վերածուել է, այսինքն Միաբանութիւնը սկսեր է շարունակել նախկին թոյլտուութիւնը :

Այսպէս նախ Հոպէշաց միաբանութիւնը, « Թէև իւր Տեսչին մեքենայութեամբ իւր օրական սովորական պարէնն Ս. Աթոռէն ստանալէ դադարած էր, և Հելլենական պաշտօրանութեան տակ մանեւու հետամտած, բայց այս միաբանութեան մէկ մասն իրենց Տեսչին ապօրինի ընթացքին դէմ բողոքելով, ըստ առաջնոյն Ս. Աթոռոյ հովանւոյն տակ մտեր են, և իրենց օրական պարէնն անկէ կընդունին » : Համարատուութեան Բ. տեղեկագիրն այս մասին ըսու կը մնայ, փախաբեւի էր որ բացաւրէր թէ Հոպէշաց միաբանութեան միւս մասն տակաւին կը շարունակէ՞ իր տեսչին մեքենայութեանց հետեւի :

Իսկ Ս. Մենդեան իրաւանց մասին ընդ Յոյն բաղում տարիներէ ի վեր եղած խնդիրներն առկա կը մնան : Ա. տեղեկագիրն կը յայտնէ թէ Միաբանութիւնն դադարած չէ իւր բողոքները կրկնելէ առաջի Բ. Դրան և տեղական Կառավարութեան . իսկ Բ. տեղեկագիրը

միայն այդ խնդրոց առկա Տնոցած ըլլալը կը ծանուցանէ, և չըսեր թէ վերջին տարւոյն մէջ բողոքել շարունակած են : Փախաբեւի էր որ այս տեսակ փոխակ խնդրոց մէջ, ապրիլ 1-է, խնդրոյն պահանջած թուականներուն մէջ, շարունակուէր բողոքը, և այդ բողոքողոց թուականներն իսկ նշանակուէին տարեկան համարատուութեան տեղեկագիրն մէջ :

Բ. տեղեկագիրն մէջ նշանակեալ է միջադէպ մը, « Երուսաղէմացի Արար Լիւնտի մը իրր միաբանութիւնի կողմէն իրաւունքով Ս. Համարձման օրհատուելոյն ներքին և արտաքին դրոշներն նորոգել : բայց Հայոց և Յունաց բողոքանաց վրայ տեղական Կառավարութիւնն վերջէն տուել է անոր չնեւ տուած դռները, և ուրիշ դռներ դրուել են Կառավարութեան կողմէն, և այսպէս խնդրը փոխուել է » :

Եւստակիան մասին — Դիւանս արժան չը դատեր այժմ մանրամասնութեանց մտնել, և զանազան բաղդատութիւններ ընել, քանի որ 37 հազար ոսկոյ պարտուց ահագին բեսը կայ ու կը կենայ, որ կրնայ ամեն հաշիւ վեր ի վայր ընել, և չիթիւլ ամեն կարգ ու կանոն և ուղղութիւն : Միայն սո դիտողութիւն կը փութանք ընել թէ, հաշուեցոյցերուն արտաքին կանոնաւորութեան փոյթ տարուած է, ինչպէս հասոյթի և ծախք գլխաւոր գլխինուրս բաժնուած են, քիչ մ'աւելի փոյթ տարուի նաև այդ գլխոց ստորագրուեալ բաժանմանց, որովս զի տանը ալ որոշակի կարգ, տեսակ ու անուններ պարունակեն թէ եւմտացոյցերու և թէ հաշուեցոյցերու մէջ, միանգամ ընդ միշտ, ի զիրար թիւն բաղդատութեան :

Բ. տեղեկագիրը կըսէ. « տարեկան ընդհանուր ծախուց գումարը դոհացուցիչ է . վաւրն զի երթագրեալն (1,000,000) 87926 դր շուաղ եղած է, որ պարէնից և այլ օրհոյցից գիներու չախաւորութենէն և ձեռք առնուած խնայողական զգուշութիւններէն յառաջ եկած է » :

Դիւանս կը գիտէ թէ, տեղեկագիրն աւել

լի լուս կընէր եթէ նախընթաց տարւոյն ծախուց ընդհանուր գումարին հետ բաղդատել, ինչպէս, նախընթաց 81—82 տարւոյ ծախուց ընդհանուր գումարն եղած է 957,695 դր, այս տարւան ծախուց ընդհանուր գումարն եղած է 912,074 դր . հետեւաբար տարբերութիւնը կըլլայ 55621 դր ի նուազ ծախք, բայց այս դեղը բոլորովին, ըստ տեղեկագիրն, պարէնի և այլ խնայողութիւններէ յառաջ եկած չէ, այլ առկայի հաշիւներէն ևս, ինչպէս կը ցուցնէ 81—82ի Հաշուեցոյցն 291,349 դրու, մինչդեռ 82—83ի Հաշուեցոյցն 275,435 դր, որով 13,864 դր ի նուազ ծախք մը կերեւի տուածաց հաշուցն մէջ և զայս 55,621 դրու չնեւ զեղէնք, կը մնայ 39,757 դր ի նուազ ծախուց գումար մը, որ կը տարբերի 81—82ի ընդհանուր ծախուց բանակութենէն, և որ գարձեալ դոհուականութեան արժանի է :

Սակայն դիւանս չը կրցաւ հասկնալ թէ

1. Ինչ՞ե համար 83—84ի եւմտացոյցին մէջ գարձեալ 1,000,000 դր ծախք նշանակուել է, քանի որ երկու տարւան ծախքերն այդ գումարին չհասնէին զատ, հետզհետէ գեղջուկութեան, մինչև 912,074 դր :

2. Ինչ՞ե համար Պատրիարքարանի համար տարեկան մասնաւոր ծախք կը նշանակուի եւմտացոյցին մէջ 20,000 դր, մինչդեռ 81—82ի ծախքն է 15,965 դր, և 82—83ի ծախքն է 5028 դր (անշուշտ Ս. Պատրիարքի բացակայութեան պատճառաւ, որ տակաւին էր շարունակուի) ուրեմն Ի՞նչ համեմատութեամբ վերջապէս 20,000 դր կենթադրուի նոր տարւոյն ծախքը : Ըստ այսմ Թարգմանատան եւն ծախքն կենթադրուի 18000 դր, մինչդեռ 81—82ի ծախքն է 10,848 դր, և 82—83ի ծախքն է 8,749 դր . Ի՞նչ պատճառաւ 18,000 դր կը նոյն երթագրուի՞ նոր տարւոյն մէջ : Ասանք և այլ ոչնչալի տարբերութիւնը բացատրուած չեն տեղեկագիրն մէջ :

3. Ի՞նչ պատճառաւ 800,000 դր հասոյթ կամ արգիւնք կ'ենթադրուի 83—84ի եւմտա

ցոյցին մէջ, մինչդեռ 81—82ի հասցիքից ընդհանուր գումարն եղած է 702,987 զրբ, և 82—83ի հասցիքից ընդհանուր գումարն 707,188 զրբ Այսքան յայտնապէս խտուն թուանշաններ լաւ առջև ինչ վատահաշիւին կայ հասցիքից ընդհանուր գումար Եւրոպէ 800,000 զրբ, 100 000 զրբ առաւել, երբ ընդհանուր սովորութեան հասցիքից և ծախսաց քանակութիւնն նախընթաց քանի մը տարիներու միջին թուերովն նշանակել, և մասնաւորաբար հասցիքից գումարին տաւել ժամանակ քան շուրջ:

4. Ինչ պատճառաւ բարեկարգութեան հասցիքից ընդհանուր գումար 360,000 զրբ կենթադրուի, մինչդեռ 81—82ի հաշուեցոյցը 316,699 զրբ զուտ հասցիք կը ցուցնէ, և 82—83 ինք 269,845 զրբ, այս վերջին տարւոյնը գրեթէ 91,000 զրբ նուազ, ուրեմն ինչ քանի վատահաշիւեամբ 360,000 զրբ կենթադրուի:

Դիւանս կը կարծէ թէ ելմասցոյցի այս թուանշաններն սրբադրութեան կարօտ են:

Դիւանս ընդհանրապէս կը դիտէ թէ՝ Ս. Աթոռոյն տարեկան ուղարկուին հազիւ 9000 ոսկոյ կը հասնի, և ծախքն ալ նոյն չափ է. եթէ այժմ ծախքն 9000 ոսկոյ կը յանգի, որաճառն 2000 ոսկոյ տոկոսի վճարումն է: Այս թուանշաններէն կը հաստատուի թէ Ս. Երուսաղէմէն ընդհանուր դատարարական օգուտ և օգնութիւն սպասելը պարզապէս ցրտորբ մ'է: Հասցիք ինչպէս յաւերժական յիշատակաց արժանի հոգեւոյց Յովնանէն Պատրիարք Ս. Երուսաղէմի մէջ ընդարձակ հոգեր գնելէն և վանուց մէջ փառաւոր շէնքեր (Պատրիարքարան և վարժարան) հիմնելն յետոյ, տարուէ տարի 120ական հազար զրբ Կ. Պօլսոյ մէջ յանուն Ս. Երուսաղէմի կառուցեալ Իսկուսարու ձեմարանին կը շրջէր, և իր մահուան ատենն ալ 6000 ոսկոյ մօտ պատրաստ գումար մը կը թողար իւր յարգին. ինչպէս կը հաստատէ Ս. Երուսաղէմի երկրաւարացի ևայ հաշուեցոյց անուն տեղաւոր, յաւելով թէ, «որդարեւ այսպիսի մեծամարմին վանք մը կառուարելու համար ոչինչ բան մ'էր»:

Համարակալութեան Դիւանս այդ երկու տասնամեաց հաշուեցոյց տեղաւոր բարեկարգութեան հաշուեցոյց ընդհանուր գումարները ըստ կարելոյն քաղելով կը ներկայէ Ազգային Ժողովոյ:

32,743	զրբ	1860—1861ի	հաշիւ	բարեկարգութեան
382,333	»	61—62ի	»	»
526,710	»	62—63ի	»	»
726,023	»	63—64ի	»	»
634,391	»	64—65ի	»	»
607,692	»	65—66ի	»	»
500,832	»	66—67ի	»	»
618,603	»	67—68ի	»	»
707,280	»	68—69ի	»	»
720,299	»	69—70ի	»	»
22,839	»	70—71ի	»	»
701,709	»	71—72ի	»	»

Դիւանս, ինչպէս նաեւ անշուշտ Ազգային Ժողովն բացատրութեան կարօտ պիտի տեսնէ այս ահագին գումարներուն տարբերութիւնն այժմեան վտիտ գումարներէն բարեկարգութեան հասցիքից մասին, որ Ս. Երուսաղէմի ելմասց ամենէն կարեւոր տեղը կը գրաւէ, որովս կը հաստատեն նաեւ Միաբանութեան կրկին տեղեկագիրքը:

Ս. Երուսաղէմի պատուիրակի վանք Ստեփան փաշան իսկ ի նիստ 10 հոկտեմբ. 1880 յաւանքի Ազգային Ժողովոյ յայտարարած է թէ՝ Ս. Աթոռոյ տարեկան եկամուտն հոգիւ 10,000 ոսկոյ կը չօչափէ, մինչ այժմ հազիւ 7000 ոսկոյ կը չօչափէ, ինչ է ոյս անկման կամ նուազման պատճառն: Միթէ՞ Հայ Ժողովրդեան բարեկարգութեան տարրին կիսով չափ և առաւել նուազած է, քան ինչ որ էր առկէ 10—12 տարի յառաջ:

Նոյնպէս քննութեան և բացատրութեան կարօտ կը գտնենք թէ ինչու համար ի նորատ բարձման պարտուց հանգանակեալ և ի Ս. Երուսաղէմ հասեալ 2100 Օսմ. ոսկոյ գումարը վերջին հաշուեցոյցին մէջ նշանակուած չէ մինչդեռ Բ. տեղեկագիրքը կը ծանուցանէ թէ՝ «ստացած է և անմիջապէս ի հաշիւ պարտուց քաղաքին դրամանոցին վճարուած է»:

Ո՞րք արձանագրութեան գործողութիւններն ի հաշուեցոյցին, Դիւանս որոնեց ու չգտաւ:

Համարակալութեան Ա. տեղեկագիրքն կը ծանուցանէ նաեւ թէ Միաբանութիւնը պարտուց բարձման Յանձնաժողովին անօրէնութեան համակերպեր է, «Ս. Աթոռոյ ի զանազան գաւառս գտնուած ինչ ինչ տարրիւն կալուածները վաճառելու մասին»:

արդ, ոյս մասին Միաբանութիւնը բոլորովին լսութիւն կը պահէ իւր Բ. տեղեկագիրքին մէջ, հարկ է որ հարցուի թէ Յանձնաժողովոյ այդ անօրէնութեան համակերպելն յետոյ, կալուած վաճառած են տրդեօք, և եթէ չեն վաճառած, ինչ պատճառաւ չեն բացատրեր Բ. տեղեկագիրքին մէջ, և եթէ վաճառել են, ինչու նոյնպէս չեն բացատրեր, և զինն ալ չեն նշանակեր հաշուեցոյցին մէջ:

Լուսարարապետ Տ. Իսահակ Եպիսկոպոս վախճանելով, տեղը բաց մնացած է, ինչ է պատճառը՝ որ այդ կարեւոր պաշտօնին տէրը չորոշուիր ցարդ և բոց կը մնայ:

միթէ՞ կարելի չէ՞ որ Ս. Երուսաղէմի Ամեն. Ս. Պատրիարքն ի Պօլսոյ այդ մասին տնօրէնութիւն մ'ընէ և Միաբանութեան Ընդհանուր Ժողովին պէտք եղած հրահանգը տայ, ըստ 32րդ յօդուածոյ կանոնադրին, ընտրել Լուսարարապետը Զարմանալի է նաեւ որ կարեւոր գումար մը չէ եղած Տ. Իսահակ Եպիսկոպոսէն, որ այնքան տարի Պօլսոյ փոխանորդութիւնը վարած էր, և վերջին վճիւն առթիւ [1860—61] 5—6 հազար ոսկի ծախք ըրած էր, ինչպէս կը ցուցնէ Երկրորդ տասնամեաց հաշուեցոյցը, և որ բաւական տարիներէ ի վեր Լուսարարապետութիւն կը նէր. անոր հետ ուրիշ 4 վախճանեցոյց ի միասին բովանդակ դոյնք կամ դրամներն հաշուեցոյցին մէջ 18,567 զրբ նշանակուել են:

Համարակալութեան Դիւանս կեղծակերպութեան ճշգրտութեան իւր ճշգրտագրին վաւերացեալ պատճէնը, և բնութեան ու բացատրութեան կարօտ կէտերուն վրայ Ս. Երուսաղէմի Պատ. Միաբանութեան պատասխանն առնելով մատուցանել առ Ազգային Ժողովն:

Համարակալութեան Դիւանս՝ նկատողութեան տալելով նաեւ Ս. Երուսաղէմի պարտուց վիճակը, Միաբանութեան աղերար, և պարտուց վճարման համար վարչութեան ձեռք առած նոր միջոցն ցարդ անպատասխանի մնալը, այն է գաւառացի աղքատներէն մարդէլի 3 զրբ զինուորական տրոց հետ Տէրութեան ձեռք հաւաքելու առաջարկը, որուն պատասխանն ցարդ չառնուեցաւ Տ. Իսահակ ի վեր, նկատելով թէ ոյդ առաջարկն սկզբամբ ընդունուել իսկ, Ազգ. Ժողովոյ հաւանութիւնը չառնուած գործողութիւնն անկարելի է, ըստ յայտարարութեան վարչութեան և որոշման Ազգ. Ժողովոյ, նկատելով թէ ցարդ պարտուց բարձման Յանձնաժողովոյ հաշիւն տեսնուած չէ, և նկատելով թէ պարտուց բարձման Յանձնաժողովն իւր 1880 Սեպտեմբեր 21 թուական պաշտօնագրով կը պատճառարանէր թէ՝ «Յանձնաժողովոյն ուրիշ գործողութեանց գաղտնի, ինչպէս հանդանակութեան մասին, Յանձնաժողովը ինչ որ ալ ընէ կիսկատար ակտիւ ըլլայ, վասն զի հազիւ թէ հանդանակութիւնն սկզբնաւորութիւն տաւ է, ուստի այս մասին տեղեկութիւն տալն [Համարակալութեան ընկեր.] ուրիշ ժամանակի կը թողու», նկատելով թէ այն թուականն ցարդ բաւական տարիներ անցած են և Յանձնաժողովոյ հանգանակութիւնն իսկ դադարած է:

Ուստի կառաջարկենք:

1. Պարտուց բարձման Յանձնաժողովն հրապարակ ի համարաւարութիւն:
2. Ս. Երուսաղէմի պարտուց բարձման միջոցներուն վրայ խորհրդածել և գործողութիւն եղանակ մ'ընտրել և յանձնարարել վարչութեան ի գործողութիւն:

Ի դիմաց Համարակալութեան Դիւանի Առնեալեան Մ. Ալեքսանեան

Յ. Յ. Պարոնեան Պ. Յ. Թորգոմեան
7 հոկտ. 1883

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴԵԱՆՑ

	0. 1. 100 դր
Ի Ս. Յակովբ մեծ տարպաս, գլխադիր եւ իւղադին	245000 —
Ս. Յարութեան զրան բացման արդիւնք, տղայ օրհնելոյ, պատարագուց վարագոյրի կոնդակագրամի կամ մոմագնի եւ կտակային նուիրաց ընդհանուր արդիւնք	91875 —
Ս. Յարութեան տարպաս	30625 —
Ս. Մննդեան տարպաս	24500 —
Յոսպիկի եւ Ռէմէի տարպաս	49000 —
	441000 —

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԼՈՒԱԾՈՑ ԵՒ ՎԱՆՈՐԷՑ

	ԾԱԽՔ 1. 0. 100 դր	ԱՐԴԻՒՆՔ 1. 0. 100 դր
Նրուսադէմի եւ չրջակայից կալուած եւ վանօրայք եւ ջուր	25000 —	105000 —
Մշակութիւն	6000 —	10000 —
Ռոսպէի կալուած	20000 —	105000 —
Ռէմէի կալուած	2000 —	10000 —
Ղազէի կալուած		55 —
Պերութի կալուած	500 —	2500 —
Լաւոդիկէի կալուած	2000 —	2000 —
Դամասկոսի կալուած	1000 —	10000 —
Աղէքսանդրիոյ կալուած	1000 —	30000 —
Գաշիւրէի կալուած	12000 —	24000 —
Զմիւռնիոյ եւ չրջակայից կալուածք	500 —	3000 —
Կ. Պօլսոյ կալուած	3000 —	20000 —
Կարնոյ կալուած	2000 —	12000 —
Տիգրանակերտի կալուած	3000 —	20000 —
Բերիոյ կալուած	2000 —	12000 —
Տփլիսու, գանձակայեւն եւ ին եւլն կալուածք		9445 —
Պատահական նորոգութեանց համար	20000 —	
	100000 —	375000 —



ԵՆԹԱԴՐԵԱԼ ԵԼԵԻՄՏԱՑՈՅՑ

Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Վ.Ա.Ս.Ն. 1883-84 ՏԱՐԻՈՑ

ԱՐԴԻԻՆՔ

ԾԱԽՔ

		1. 0. 100 դր.			1. 0. 100 դր.
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԼՈՒԾՈՑ			1. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ		
Երուսաղէմ եւ ի զանազան գաւառս (մանրամասնութիւնք ի վերջին երեսն)		375000	Միաբանութեան ուսեկեաց ծախք		163000
2. ԳՈՐԾԱՐՍՆԱՅ			Քրձազգեաց միաբանից, դպրաց եւ սարկաւագաց հանդերձի եւ լուաց- քի ծախք		30000
Մոմատունէն զուտ չահ		5000	Միաբանական տարեկան		20000
Տպարանէն զուտ չահ		45000	Միաբանութեան եւ երուսաղէմի հայազգի աղքատաց բժշկի, դեղի ծախք		15000
Լուսանկարի գործարանէն զուտ չահ		5000			228000
3. ԵԿԵՂԵՅԵԱՅ		25000	2. ԵԿԵՂԵՅԵԱՅ		
Ս. Յակովբայ եւ Ս. Աստուածածնի եւն մասնաւորարդիւնք ընդ հանուր գանձա- նակադրամ Երուսաղէմ եւ ի զանազան գաւառս		40000	Ս. Յակովբայ, Ս. Աստուածածնի եւ տաճարաց իւղի, մոմի, զդեղատուց նորոգութեանց եւ զանազան ծախք		30000
4. ԴՊՐՈՅԱՅ		30000	Ժամուց ի Ս. Յակոբ եւ ի Ս. Աստուածածնի		40000
Յանուն ժառ. վարժարանի Աշգեանի կտակ եւ Օրիորդաց վիճակահանութենէ Ներ եւ նուէրներ [մանրամասնութիւնք ի վերջին երեսն]		30000	Ս. Յարութեան տաճարին զանազան ծախքերը		30000
5. ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ			Ս. Ծննդեան տաճարին եւ Միաբանից ուսեկեաց ծախքերը		40000
1000 ուխտաւորներէ գոյանալի արդիւնք եւ զանազան տեղերէ մասնաւոր կտակ- ներ եւ նուէրներ [մանրամասնութիւնք ի վերջին երեսն]		360000	3. ՏԵՍՉՈՒԹԵԱՆՅ		
Նախատեսեալ ելեւմտից բացն		800000	Կ. Պօլսոյ փոխանորդարանի ծախքը		30000
		200000	Յոպպէի վանուց ծախքը		30000
		1000000	Ռէմիէի [8000], Պէրութի [5000] վանօրէից ծախքերը		13000
			Գամասկոսի վանուց ծախքը		8000
					84000
			4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԾԱԽՔԵՐ		
			Պատրիարքարանի զանազան ծախքերը		20000
			Դիւանատանց, թղթատարի, հեռագրի եւ լրագրաց բաժանորդադիւնք		16000
			Թարգմանատան ծախք, ամսականք պահակաց եւ երթեւեկութեանց ծախք		18000
			Պարզեւք սահմանեալ եւ պատահական		15000
			Երուսաղէմի հայազգի աղքատաց հաց, զինուորական տուրք եւ պատա- հական նպաստք		18000
			Հապէշաց հաց եւ կերակուր		4000
					94000
			5. ԿՐԹՈՒԹԵԱՆ		
			Ժառ. վրձնի, երուսաղէմի երկսեռ եւ Բեթղեհեմի դպրոցաց ծախքերը		90000
			6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՆՕՐԷԻՅ ԵՒ ԿԱԼՈՒԾՈՑ [մանրամաս- նութիւնք ի հետեւեալ երեսն]		400000
			7. ՈՒՍՏԱՌՈՐԱՅ		
			1000 ուխտաւորի առթիւ զանազան ծախք Երուսաղէմ եւ ի Յոպպէ		30000
			8. ՏՈԿՈՍ		
			Տոկոսաւոր պարտուց տոկոս եւ Տէրոյէնցի ամսականք		270000
					4000000

Ելեւմտացոյցս ընկալեալ եւ վաւերացեալ է ի Միաբանական
Ընդհ. Ժողովոյ Ս. Աթոռոյն Երուսաղէմի ի 16 Յունիսի 1883

Ի շինաց Միաբանական Ընդհանուր Ժողովոյ
Ատենայեալ
ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի բացակայութեան լմեն. Ս. Պատրիարքին
Նախագահ եւ Պատրիարքական փոխանորդ-
ՅԱՐՈՒԹԻԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ըստցականութեան ԱՄԵՆ. Ս. Պատրիարքին
Նախագահ և Պատրիարքական Փոխանորդ.

၈၈၀၈၃၂၁၆၂၄ ၇၂၀၅၂၄၃၅

UNIVERSITY OF CHICAGO

1895-1896

३०५१६

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014116

